ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ
Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

07 հունիսի 2013 թվականի N 231-Ա

ք. Հրազդան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՊՈՌՇՅԱՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 7-րդ և 75-րդ հոդվածների, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2013 թվականի մայիսի 2-ի N 542-Ն որոշումը՝ **որոշում եմ.**

1. ***Արմենուհի Վոսամի Մելիքյանին*** 2013 թվականի հունիսի 7-ից նշանակել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Պոռշյան գյուղական համայնքի ղեկավարի պաշտոնակատար՝ մինչև համայնքի նորընտիր ղեկավարի՝ իր պարտականությունների ստանձնումը:

2. Համայնքի ղեկավարի պաշտոնակատարին՝

1) ընտրությունների նախապատրաստման և անցկացման հիմնական միջոցառումների ժամանակացույցի համաձայն իրականացնել համայնքի ղեկավարին վերապահված լիազորություններ,

2) տեղեկացնել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Պոռշյան գյուղական համայնքի նորընտիր ղեկավարին, որ նա իր պաշտոնը պետք է ստանձնի ընտրությունների արդյունքների պաշտոնական հրապարակման հաջորդ օրը:

3. Սույն որոշման կատարման հսկողությունը դնել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի տեղական ինքնակառավարման և հանրապետական գործադիր մարմինների հարցերով վարչության պետ՝ ***Սամվել Հակոբյանի*** վրա:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Կ. ՇԱՀԳԱԼԴՅԱՆ